Մարտի 12-ին ԵրևանիԷդ.Բոյաջյանի անվ. թ 121 հիմնական դպրոցի 7-րդ դասարանում անցկացվեց բաց դաս ֆիզիկա և ինֆորմատիկա առարկաներից: Դասի թեման՝ «Շփման ուժը և ապահով համացանցը»: Դասի նպատակը՝ աշակերտներին հասկացնել, որ ինչպես շփման ուժը, այնպես էլ համացանցը, կարող է թե՛ օգտակար, թե՛ վնասակար լինել մարդու համար:

Ֆիզիկայի և ինֆորմատիկայի ուսուցչուհի՝ Նատալյա Տեր-Անտոնյան

«Շփման ուժ և համացանց» բաց դաս

Ինտեգրված դաս ֆիզիկա-ինֆորմատիկա առարկաներից:

Դասի սցենար

1.Աշակերտները նախապես պատրաստել են պրեզենտացիա **«Ապահով համացանց և շփման ուժ»** թեմայի վերաբերյալ:

2. Դասարանը բաժանվում է 2 խմբերի: Առաջին խումբը ներկայացնում է համացանցի օգուտը, երկրորդ խումբը՝ վնասը: Խմբերը կազմված են բժիշկներից, հոգեբաններից, գիտնականներից:

3. Հակիրճ ներկայացվում է համացանցի **պատմությունը:** 5 րոպե

4. Աշակերտները պատմում են շփման ուժի մասին, օրինակների վրա բացատրում են, թե ե՞րբ շփման ուժը կարող է օգնել, իսկ ե՞րբ վնասել մարդուն: Նշում են շփման մեծացման և փոքրացման եղանակները: 10 րոպե

4.Շփման ուժը համեմատում են համացանցի հետ՝ նշելով համացանցի օգուտն ու վնասը: Պատմում են, թե ինչ կանոններ կան համացանցը անվտանգ դարձնելու համար: 10 րոպե

5.Աշակերտներից մեկը՝ **բժիշկը**, պատմում է, թե համացանցային խաղերը ինչ ազդեցություն են թողնում երեխաների առողջության վրա: 3 րոպե

6.**Հոգեբանը** առաջարկում է թեստ լրացնել, որի օգնությամբ յուրաքանչյուրը կարող է պարզել՝ ունի արդյոք ինտերնետային կախվածություն, թե՝ ոչ: 3 րոպե

7.**Աստղաֆիզիկոսը** համեմատում է համացանցը Տիեզերքի հետ՝ նշելով, որ եթե Տիեզերքը անսահման է,ապա համացանցի հնարավորությունները նույնպես անսահման են: 3 րոպե

8.**Նկարիչը** պաստառ է պատրաստել համացանցի և շփման ուժի մասին: Նա խնդրում է օպերատորին որոնել համացանցում տեղեկույթ՝ իր սիրած նկարիչների մասին և ներկայացնել նրանց հայտնի նկարները: 3 րոպե

9.Աշակերտները համոզվում են , որ համացանցը կարող է շատ օգտակար լինել նոր գիտելիքներ ձեռք բերելու համար:

10.Հրավիրված **ծնողներին** բաժանվում է 10 խորհուրդ համացանցը ավելի ապահով դարձնելու համար: 3 րոպե

11.Աշակերտները ծնողներին և ուսուցիչներին ծանոթացնում են **safe.am** կայքի հետ: 5 րոպե